ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

6 մարտի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

24
(3233)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՄԿ ՈՎ Է «ԿԻՍԱԲԱՑ ԼՈՒՍԱՄՈՒՏՆԵՐ»-Ի ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԱՅՐԸ

Երեկ Ազգային Ժողովում տեղի ունեցած քննարկման ընթացքում իշխանական պատգամավոր Հասմիկ Հակոբյանը ամբիոնից հայտարարեց, թե ընդդիմադիր պատգամավոր Աննա Գրիգորյանը պետք է հայտնի՝ որտեղ է աշխատում իր հայրը: Ի պատասխան՝ Աննա Գրիգորյանը պարզաբանեց, որ իր հայրը ողջ կյանքում եղել է միջին օղակի պետական ծառայող եւ մինչ այժմ շարունակում է աշխատել համակարգում ու ենթարկվում է տարաբնույթ ճնշումների: Պատգամավորը նաեւ ընդգծեց, որ վերջին շրջանում իր ընտանիքի նկատմամբ տարբեր ճնշումներ են գործադրվում: Նրա խոսքով՝ եղբայրը, որը երկար տարիներ պետական համակարգում ծառայել է, պարզապես հեռացվել է աշխատանքից՝ իր ընդդիմադիր քաղաքական դիրքորոշման պատճառով:

Այս հայտարարությունների ֆոնին «Ժողովուրդ» օրաթերթը հիշեցնում է, թե ով է իշխանական պատգամավոր Հասմիկ Հակոբյանը, նրա հայրը, եւ ինչ ճանապարհով է նա հասել խորհրդարան:

Տեղեկացնենք, որ մինչ իշխանական թիմին միանալը, Հասմիկ Հակոբյանը 2014-2015թթ. աշխատել է «Ա Թիվի» հեռուստաընկերության սցենարիստ-լրագրող «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարում: Այնուհետեւ որպես գործավարուհի՝ Արթուր Բաղդասարյանի կողմից հիմնադրված Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայում, որի մասին բազմիցս գրվել է: Հետագայում նա ներգրավվել է «Օրինաց երկիր» կուսակցության մեդիա արշավներում եւ աշխատել որպես փաստացի կուսակցության քարոզիչ կուսակցական Հ3 հեռուստաալիքում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Կոտայքի մարզի Ծաղկաձոր խոշորացված համայնքի ղեկավար Նարեկ Հարությունյանը պաշտոնը զբաղեցնում է 2021 թվականի դեկտեմբերի 20-ից՝ համայնքների խոշորացման արդյունքում ձեւավորված համայնքի ղեկավար ընտրվելուց հետո: Մինչ այդ նա աշխատել է ոստիկանությունից մինչեւ հանքարդյունաբերության, անգամ՝ հյուրանոցային ադմինիստրատոր: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է համայնքի ղեկավարի կողմից ներկայացված 2024 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի տարեկան հայտարարագիրը, որը բացահայտում է պաշտոնյայի ունեցվածքը, ֆինանսական միջոցներն ու եկամուտները: Հայտարարագրում ներկայացված տվյալների համաձայն՝ համայնքի ղեկավարը հայտարարագրել է մի շարք անշարժ գույքեր, կանխիկ դրամական միջոցներ եւ պետական աշխատավարձից ստացված եկամուտներ: Միեւնույն ժամանակ փաստաթուղթը առաջացնում է նաեւ որոշ հարցադրումներ՝ կապված գույքի ձեռքբերման ժամանակի, ֆինանսավորման աղբյուրների եւ ֆինանսական ակտիվների ներկայացման հետ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Մեզ հայտնի դարձավ, որ Գեւորգ Մանվելի Թեւանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով պաշտոնատար անձ՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2024 թվականի ապրիլի 23-ի թիվ 1/135-Ա հրամանով զբաղեցնելով ՀՀ ՊԵԿ պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման եւ հսկողության վարչության մաքսային սպասարկման եւ հսկողության թիվ 14 բաժնի պետի տեղակալի պաշտոնը, ի թիվս այլնի, կրել է ապրանքների տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցների կշռման, ցամաքային անցման կետերում այդ գործընթացի փաստաթղթավորման եւ հաշվառման, ցամաքային անցման կետերով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների վրա կապարակնիքների, կնիքների եւ նույնականացման այլ միջոցների կիրառման եւ (կամ) այդպիսի միջոցների հեռացման, ռիսկի պրոֆիլների եւ (կամ) զեկուցագրերի հիման վրա՝ ցամաքային անցման կետերով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսային հսկողության ձեւերի եւ (կամ) մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցների կիրառման, ցամաքային անցման կետերում հանցագործությունների եւ մաքսանենգության կանխարգելման, բացահայտման եւ կանխման աշխատանքները, ինչպես նաեւ հանցագործության հատկանիշների առկայության դեպքում՝ իրավապահ մարմիններին հաղորդում ներկայացնելու համակարգման պարտականություններ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



Սամվել Կարապետյանը կմնա տնային կալանքի տակ: Այս մասին գրել է փաստաբան Արամ Վարդեւանյանը. «Հարգելի գործընկերներ, Վերաքննիչ դատարանի մի Դատավոր իրավաչափորեն ազատ արձակեց Արշակ Սրբազանին ապօրինի կալանքից, իսկ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Ժ. Մելիքսեթյանը մերժեց մեր կողմից ներկայացված բողոքը եւ որոշեց, որ Սամվել Կարապետյանի ապօրինի տնային կալանքը դեռեւս պետք է պահպանվի: Որոշումը ստանալուն պես անպայման կներկայացնենք իրավունքի նկատմամբ հերթական խայտառակության մանրամասները, բայց սա ակնհայտ ցույց է տալիս, որ օրվա իշխանությունների վախերն անչափելի են, իսկ քաղաքական հետապնդումն անվիճելի: Իրար հերթ չտալով խոսում են Սամվել Կարապետյանի խոսքի ազատության սահմանների մասին, միաժամանակ վախենում են նույնիսկ վերացնել այս աբսուրդային սահմանափակումներն ու խափանման ինտենսիվ միջոցը, երբ չկա ու չկար որեւէ հիմք այն պահպանելու համար: Հայաստանում ժողովրդավարության նկատմամբ ծաղրը հենց այսպիսի տեսք է ունենում եւ սա տեսնում է մեր հանրությունը: Սամվել Կարապետյանի այլեւս 260 օր տեւող ազատության ինտենսիվ սահմանափակումն առանց որեւէ իրավական տվյալի, պարզապես հրապարակայնորեն մեր Մայր Աթոռը պաշտպանող խոսքի համար՝ չի կարող լինել իրավաչափ, չի կարող լինել օրինական, չի կարող լինել ողջամիտ, չի կարող լինել համաչափ: Չկասկածեք սա եւս հաղթահարելու ենք եւ հաղթանակներ շատ են լինելու»:

ԿԵՂՏՈՏՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏԱՁԳՎԵԼՈՒ ԵՆ

ArmLur.am-ը իր տաղավարում հյուրընկալել է «Քոչարի» կուսակցության նախագահ Արտակ Սարգսյանին, ում հետ զրուցել ենք Քենիայում իրականացրած հեղափոխությունից մինչեւ Հայաստանի համապետական ընտրություններ:

-Պարո՛ն Սարգսյան, Դուք նաեւ հայտնի եք որպես Քենիայում հեղափոխություն իրականացրած եւ այդ հեղափոխությանը մասնակից անձ: Ինչպե՞ս եք իրականացրել Քենիայի հեղափոխությունը եւ ի՞նչ մասնակցություն եք ունեցել:

-Նշեմ, որ մենք Քենիայում հեղափոխություն չենք արել, այլ կանխել ենք երեք հեղաշրջում, հաղթել ենք ընտրությունները, 80 տոկոս հաղթանակ ենք ունեցել Առապմոյի հանդեպ, որը 27 տարի բռնապետ էր եւ դիկտատոր, բայց օգնել ենք հարեւան բռնապետական երկրներին, որպեսզի կատարեն իշխանափոխություն:

-Նաեւ այդ փորձը ցանկացել եք բերել Հայաստան, ինչքանո՞վ եք համարում, որ Հայաստանում այն իրագործվել է, եւ ի՞նչ առումներով այն չիրագործվեց եւ չհաջողվեց:

-Ո՛չ, այդ փորձը Հայաստան չենք բերում, քանի որ կան կարմիր գծեր, որ Հայաստանում չի լինելու: Հիմնական կարմիր գիծը, որ հայը հայի արյուն չպետք է թափի, եւ իշխանությունը չի կարող դառնալ կռվախնձոր այս մեր փոքր երկրում, քանի որ տեսել եմ երկրներ, որտեղ իշխանությունը դարձել է կռվախնձոր, եւ այդ երկրները մինչեւ հիմա ոտքի չեն կանգնում:

-Ուրիշ ի՞նչ առումներով կարող եք ասել, որ չհաջողվեց այդ փորձը Հայաստանում:

-Չի եղել չհաջողել, ընդհակառակը, ես համարում եմ, որ հաջողված է: Այն փորձը, որ մենք ունենք թե՛ միջազգային բանակցությունների համար, թե՛ մասնակցել ենք ակտիվ Սուդանի բաժանմանը, այն ժամանակ, որ նույնիսկ տեղի բնակիչները չէին հավատում, որ Սուդանը պետք է բաժանվի, մենք եղել ենք այն մարդիկ, ովքեր ասել են՝ հույս չկա, Սուդանը անպայման կբաժանվի: Նշեմ նաեւ, որ մասնակցել ենք բոլոր գագաթնաժողովներին եւ բանակցություններին: Նույնիսկ քարտեզի գծումը, թե ոնց պետք է բաժանվի, ես իմ ձեռքով եմ գծել: Ես չէի ասի, որ չի հաջողվել: Մենք նոր ենք սկսել, եւ արդեն համարում եմ, որ հաջողվել է, քանի որ ունենալով այս փորձը՝ այս իշխանությունների մանիպուլյացիաները շատ կանխատեսելի են մեր համար:

-Ինչպե՞ս եք պատրաստվում համապետական ընտրություններին, ի՞նչ գործընթացի մեջ եք:

-Ես հույսով եմ, որ ընտրությունները կկայանան: Պարսկաստանի այսօրվա իրավիճակը ցույց է տալիս, որ մեր մոտ շատ ռիսկային փուլ է սկսվում, այսինքն՝ ընդդիմությունները կսկսեն քարոզարշավ, կանեն որոշակի ֆինանսական եւ այլ ծախսեր, եւ միգուցե մեզ մոտ հետաձգվի անվտանգության առումներով, իսկ մյուս ռիսկը՝ եթե չանեն՝ հույս ունենալով, որ ընտրություններ չի կայանա, մի խոսքով, ռիսկային գոտում ենք գտնվում: Պետությանը, իհարկե, շատ ձեռնատու է, այս իշխանությունները նույնիսկ ամեն ինչի պատրաստ կլինեն՝ ռեյտինգ չունենալով. միգուցե ԱԹՍ մուրան, միգուցե պրովոկացիա սարքեն, Պարսկաստանից որպեսզի լինի հարված, եւ մեր մոտի ԱՄՆ դեսպանատունը լավ թիրախ է Պարսկաստանի համար, ամեն ինչ հնարավոր է, ես կարծում եմ, որ ընտրությունները հետաձգվելու են:

-Ընտրություններին ինչպե՞ս եք մասնակցելու՝ առանձի՞ն, թե՞ մտածում եք կարելի է այս կամ այն ուժին միանալ եւ միասնաբար մասնակցել ընտրության:

-Եթե խոսքը գնում է խորհրդարանական ընդդիմություններին, իհարկե ոչ: Կան առաջարկներ ուժերի կողմից միավորվելու, դեռ մտածում ենք: Քանի որ դեռ մենք չենք տվել համաձայնություն, չեմ ցանկանա նշել այդ ուժերի անունը, միայն կարող եմ ասել, որ նորաստեղծ ուժերից են կամ ազգայնական ուժերից են, որոնք կեղտոտված չեն այս համակարգի մեջ:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագրի ստորագրման ժամկետներն անհայտ են: Այս մասին մարտի 5-ին կառավարության ճեպազրույցի ժամանակ հայտարարել է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Կարծես թե տնտեսական օրակարգը վազանցում է քաղաքական օրակարգին, ինչը լավ է, որովհետեւ քաղաքական օրակարգերը նրա համար են, որ սպասարկեն տնտեսական օրակարգերը»,-ասել է Փաշինյանը: Նա հույս է հայտնել, որ ապրանքները շուտով կսկսեն ներմուծվել ոչ միայն Ադրբեջանից Հայաստան, այլեւ հակառակը:

ՊԱՊԻԿՅԱՆԸ ՍՈՒՏ Է ՀԱՄԱՐԵԼ

ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանն ապատեղեկատվություն է անվանել շրջանառվող լուրերը, թե իբր անցած տարվա ամռանը Ադրբեջանը դիրքային առաջխաղացում եւ բարելավումներ է ունեցել Գեղարքունիքի մարզի եւ Ջերմուկի ուղղությամբ:

Սուրեն Պապիկյանը թեմային անդրադարձել է ՀՀ Ազգային Ժողովում հարցուպատասխանի շրջանակներում՝ անդրադառնալով «Միասնության թեւեր» քաղաքական նախաձեռնության ղեկավար Արման Թաթոյանի հայտարարությանը, թե իբր անցած տարվա հուլիս-օգոստոս ամիսներին ադրբեջանական զինուժը դիրքային առաջխաղացում եւ բարելավումներ է ունեցել Գեղարքունիքի մարզի եւ Ջերմուկի ուղղությամբ:

«Նշված անձնավորությունը ստում է, նման բան չկա»,-ասել է Պապիկյանը՝ համոզմունք հայտնելով, որ նման հայտարարությունները նպատակ ունեն խաթարել ՀՀ խաղաղության հասնելու ճանապարհը:

ԾԱՎԱԼԻ ՆՎԱԶՈՒՄ

Իրանի հետ սահմանի Ագարակ անցակետից դուրս՝ հայկական կողմում այս պահին 180-200 բեռնատար է սպասում սահմանը հատելու հնարավորությանը: Այս մասին հայտնեցին Պետական եկամուտների կոմիտեից:

Նշվեց, որ իրանական կողմում պարբերաբար լինում են կապի խափանումներ, ինչի պատճառով էլ պարբերաբար կարող են առաջանալ հերթեր, սակայն կապի բացակայության պարագայում աշխատում են նաեւ թղթային տարբերակով, որն ավելի ժամանակատար է: Կուտակումներ չառաջացնելու համար քաղաքացիների համար կարող են լինել որոշակի սահմանափակումներ՝ բեռնատարների բնականոն տեղաշարժն ապահովելու համար:

«Իրանում ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ բեռնափոխադրողները չեն ցանկանում Իրանի տարածքն օգտագործել որպես տարանցիկ երկիր՝ նախընտրելով Չինաստանից եւ Մերձավոր Արեւելքի մյուս երկրներից ներկրվող բեռների փոխադրումն իրականացնել Վրաստանի տարածքով: Ուստի, ենթադրելի ու բնական է, որ բեռնափոխադրումների ծավալը Իրանի տարածքով պետք է նվազի: Վերջին օրերին նկատվում է բեռնափոխադրման ծավալների որոշակի նվազում, որը շատ արտահայտիչ չէ»,-ասացին ՊԵԿ-ից:

ՆԱԽԿԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԿՈՉԸ

ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Սամվել Ֆարմանյանը ֆեյսբուքյան իր էջում գրում է. «Ժամ առաջ, որպե առաջ պետք է Նիկոլին հեռացնել վարչապետի պաշտոնից:

Նա այս օրհասական իրավիճակում ավելի մեծ սպառնալիք է Հայաստանի գոյության ու հայ ժողորդի անվտանգության համար, քան մեզ մոտեցող սարսափելի ցունամին: Ադրբեջանն ու Թուրքիան, կարծես, ներքաշվում են Իրանի դեմ գործողություններում՝ դրանից բխող հավանական սցենարներով:

Ընդդիմությո՛ւն, իրար գլուխ եկեք, շատ արագ վարչապետի ընդունելի միասնական թեկնածու առաջադրեք ու ԱԺ-ում իմպիչմենտի միջոցով հեռացրեք Նիկոլին: Ի՞նչ ընտրություն: Ի՞նչ հունիս: Մինեւ հունիս ի՞նչ է մնալու՝ երկրից, ձեզնից... Հայաստանն անտեր էլ չէ՝ դարպասները ներսից բացված են:

Արագ համախմբվեք բոլորով, ձեւավորեք ազգային համերաշխության կարող ու «ձվերով» կառավարություն. թող Հայաստանը գոնե գոյության շանս ստանա:

Անիծյալ լինեք, եթե անգամ նման օրհասական իրավիճակում թացը չորից չեք տարբերելու ու նիկոլից ավելի նիկոլ եք լինելու»:

ՍՐԲԱԶԱՆԸ ԱԶԱՏՎԵՑ ԿԱԼԱՆՔԻՑ

Արշակ Սրբազանը կալանքից անհապաղ ազատ արձակվեց վերաքննիչ դատարանի դատավոր Ա.Նիկողոսյանի որոշմամբ: Այս մասին Facebook-ի իր էջում հայտնեց փաստաբան Արսեն Բաբայանը:

Արշակ Սրբազանը, հիշեցնենք, ձերբակալվել է դեկտեմբերի 4-ին ԱԱԾ-ի կողմից՝ ՔԿ շենքից դուրս գալիս: Թե ինչի համար էր պետք այդ շոուն, որ ՔԿ շենքում ԱԱԾ-ն է ձերբակալում, գիտեն թերեւս մտահղացման հեղինակները: ՔԿ-ն պաշտոնապես հաղորդեց, որ նրա նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 4-րդ կետերով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ թմրամիջոց ապօրինի իրացնելը՝ հանդիսադիր վայրում):

Մինչդեռ, ինչպես պարզվել է, խոսքը ոչ թե Սրբազանի կողմից իրացման մասին է, ինչպես ի սկզբանե փորձ էր արվում շահարկել, այլ Սրբազանը մեղադրվում է 2018թ. «Նոր Հայաստան, նոր Հայրապետ» շարժման ակցիա իրականացնողներից մեկին վարկաբեկելու նպատակով պայուսակում թմրամիջոց դնելու հրահանգ տալու մեջ, ինչը, պաշտպանության կողմի դիտարկմամբ, անհեթեթություն է:

Դեկտեմբերի 5-ին Երեւանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Մասիս Մելքոնյանի որոշմամբ՝ Արշակ Սրբազանը կալանավորվել է: Ի դեպ, հենց Մասիս Մելքոնյանի որոշմամբ էլ կալանավորվել են Միքայել եւ Բագրատ Սրբազանները:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՍԱՀՄԱՆԸ ՉԻ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ ԼՌՈՒԹՅԱՄԲ

«Միասնության Թեւեր» քաղաքական նախաձեռնության համահիմնադիր Դավիթ Անանյանը գրել է. «Երբ ներկայացվում են փաստեր, որոնք ունեն հստակ աշխարհագրական կետավորում, ժամանակային շղթա եւ արբանյակային պատկերներով հաստատված ինժեներական փոփոխություններ, այդ պահին քաղաքական թիվ մեկ ամբիոնից հնչող խոսքը վեր է ածվում աղմուկի, որովհետեւ սպառվում են արդարացումները: Այսօր «Միասնության Թեւեր» քաղաքական նախաձեռնության ղեկավար Արման Թաթոյանը ներկայացրեց հենց այդպիսի փաստեր՝ Ադրբեջանի զինված ուժերի դիրքային առաջխաղացումների վերաբերյալ Հայաստանի ինքնիշխան տարածքում: Այսպիսի ապացույցները չեն քննարկվում աղմուկով եւ չեն լռեցվում քարոզչությամբ: Դրանք կամ հերքվում են փաստերով, կամ ընդունվում են որպես իրականություն: Եւ հենց այստեղ է սկսվում խնդիրը: Պետության անունից հանդես եկողները կարող են ընտրել տարբեր բանակցային ռազմավարություններ, կարող են խոսել խաղաղության մասին, կարող են ունենալ իրենց քաղաքական հաշվարկները: Բայց պետության կառավարման համար պատասխանատուները իրավունք չունեն սեփական ժողովրդից թաքցնելու երկրի սահմանների իրական վիճակը: Հայրենիքի սահմանը ոչ թե քաղաքական նարատիվ է, այլ պետականության վերջին գիծը: Եւ այդ գիծը չի կարող պահպանվել լռությամբ, կոծկումով կամ տեղեկատվական մանիպուլյացիաներով:

«Միասնության Թեւեր»-ը չի զբաղվում աղմուկով: Մենք զբաղվում ենք պետական պատասխանատվությամբ: Երբ կան փաստեր՝ դրանք պետք է ներկայացվեն: Երբ կա խնդիր՝ դրա մասին պետք է խոսվի: Իսկ իշխանությունը պարտավոր է հիշել պետական մտածողության հիմքում ընկած հետեւյալ սկզբունքը. պետականության հարցերում լռությունը ոչ թե ուժի, այլ պատասխանատվությունից խուսափելու նշան է: Իսկ երբ երկրի սահմանների վերաբերյալ փաստերը թաքցվում են սեփական ժողովրդից, դա այլեւս քաղաքական վեճի թեմա չէ: Դա արդեն իշխանության կողմից իր պետական պարտականությունից նահանջելու, կամ այդ պարտականությունից խուսափելու խնդիր է: Պետությունը չի պաշտպանվում կոծկումով: Սահմանը չի պահպանվում լռությամբ»:

ԱՆՊԱՏԱՍԽԱՆ ՉԻ ՄՆԱ

Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտարարել է, որ Նախիջեւանի ուղղությամբ Իրանի իրականացրած հարձակումն անպատասխան չի մնա: Գերատեսչությունը ողջ պատասխանատվությունը բարդել է թեհրանյան վարչակազմի վրա: «Այս միջադեպի համար ամբողջությամբ պատասխանատվությունը կրում է Իրանը: Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը պատրաստում է անհրաժեշտ արձագանքման միջոցառումներ՝ երկրի տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը պաշտպանելու, ինչպես նաեւ քաղաքացիական բնակչության եւ քաղաքացիական ենթակառուցվածքների անվտանգությունն ապահովելու համար»,- ասված է պաշտոնական հայտարարության մեջ:

ԻՆՉԻՆ ԵՆ ՄՏԱՀՈԳՎԱԾ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԳՆՈՒՄ Է ԱՐԹԻԿ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նպատակ ունի շուրջ 50 ՔՊ-ականների հետ շաբաթ օրը՝ մարտի 7-ին, մեկնել Շիրակի մարզ:

ArmLur.am-ի աղբյուրները փոխանցում են, որ Շիրակի մարզում արդեն իսկ «պատրաստություն» են տեսնում՝ Փաշինյանի դիմավորման հետ կապված:

Առաջինը նախատեսված է լինել Արթիկում, որտեղ ՔՊ-ականներն ամեն բան անում են, որպեսզի արթիկցիները «հարձակումներ» չգործեն Փաշինյանի ու ՔՊ-ականների վրա: Նպատակը՝ կանխել անկանխատեսելի իրավիճակները եւ հնարավոր բախումները:

Արթիկի ընդդիմադիրներին եւս զգուշացված է փողոցներում «չկտրել Փաշինյանի դեմն» ու հարցեր չուղղել: Տեղի իշխանական շրջանակները փորձում են այցն անցկացնել վերահսկելի պայմաններում՝ ապահովելով կազմակերպված ընդունելություն եւ նվազագույնի հասցնելով բողոքի ակցիաների հավանականությունը:

Հիշեցնենք, որ նախորդ շաբաթ-կիրակի Նիկոլ Փաշինյանը ավտոբուսով ՔՊ-ականների հետ շրջել է Արմավիրի եւ Լոռու մարզերում՝ հանդիպումներ ունենալով համայնքների բնակիչների հետ: Այդ այցերի ընթացքում եւս նկատվել էր ուժեղացված անվտանգություն, ինչպես նաեւ ընդդիմադիր խմբերի դժգոհության դրսեւորումներ:

Ըստ մեր տեղեկությունների՝ Շիրակի մարզ այցի շրջանակում նախատեսվում են հանդիպումներ տեղական ակտիվի, համայնքապետերի եւ կուսակցական ներկայացուցիչների հետ: Չի բացառվում նաեւ փակ ձեւաչափով քննարկում մարզային կառույցների հետ՝ առաջիկա քաղաքական գործընթացների եւ կազմակերպչական հարցերի շուրջ:

ArmLur.am-ի աղբյուրները նշում են, որ իշխանական շրջանակներում մտահոգություն կա հատկապես սոցիալական խնդիրների բարձրաձայնման եւ սուր հարցերի ուղղման հետ կապված, ինչի պատճառով փորձ է արվում նախապես «կանխարգելել» հնարավոր լարված դրվագները:

Թե որքանով կստացվի ապահովել լիարժեք վերահսկելի միջավայր եւ խուսափել բողոքի դրսեւորումներից, պարզ կդառնա արդեն շաբաթ օրը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԵՐԿՐԻ ՎԻՃԱԿԸ ՎԱՏԱՆՈՒՄ Է

ՀՀԿ գործադիր մարմնի նիստի արդյունքում ընդունված հայտարարությունը քաղաքական օրակարգում կարեւոր երանգ է ավելացրել: Այս մասին երեկ՝ մարտի 5-ին, Հակակոռուպցիոն դատարանի մոտ, ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի գործով դատական նստից առաջ, լրագրողների հետ զրույցում ասաց ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանը: Նա նշեց, որ երկրում, երկրի շուրջ իրավիճակը վատ է ու վատանում է:

«Այս իշխանությունները հերթական անգամ ապացուցում են, որ ադեկվատ իշխանություններ չեն ո՛չ ներքին, ո՛չ արտաքին մարտահրավերներին, երկրի ներսում մոլեգնող տեռորն այլ դրսեւորումներ է ստանում»,- ասաց Աշոտյանը:

Ըստ նրա՝ ընտրական մեկնարկած գործընթացում իշխանությունը ոչ միայն չարաշահում է վարչական լծակները, այլեւ աննախադեպ բնույթի նախանախընտրական կեղծիքների է դիմում, ինչպես, օրինակ, պետբյուջեի օգտագործումը նախընտրական կաշառքի համար կամ Ընտրական օրենսգրքի փոփոխությունն ընտրություններից մի քանի ամիս առաջ:

ՆՈՐ ՊԱՇՏՈՆ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ Նիկոլ Փաշինյանը նպատակ ունի Առնակ Ավետիսյանին նշանակելու ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների փոխնախարար:

Հիշեցնենք, որ երեկ ArmLur.am-ը տեղեկացավ, որ Նիկոլ Փաշինյանը աշխատանքից ազատել է Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահ Առնակ Ավետիսյանին:

Առնակ Ավետիսյանը Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահ է նշանակվել 2022թ.՝ փոխարինելով Գարիկ Սարգսյանին, որն ազատվել էր այդ պաշտոնից եւ նշանակվել Վեդի համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար:

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Առնակ Ավետիսյանին նշանակել Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահ»,- նշված է վարչապետի որոշման մեջ:

Նշենք, որ մարտի 17-ին Առնակ Ավետիսյանը նշանակվել է ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար, նախքան դա Ավետիսյանը 2018թ. մինչեւ 2021թ. մարտի 16-ը աշխատել է Կոտայքի մարզպետի տեղակալի պաշտոնում:

ՀԵԹԱԿԱՆ ԽՄԲԱՔԱՆԱԿ

Հայաստան է ուղարկվում 1,984 տոննա դիզելային վառելիք (31 վագոն): Միեւնույն ժամանակ, Բաքվից մեկնում է 135 տոննա պարարտանյութով բեռնված երկու վագոն, որոնք Ռուսաստանից Հայաստան են տեղափոխվում Ադրբեջանի տարածքով, հայտնում են ադրբեջանական ՁԼՄ-ները:

Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղության ծրագրի համաձայն՝ Ադրբեջանից Հայաստան նավթամթերքի արտահանումը սկսվել է նախորդ տարվա դեկտեմբերի 18-ից:

Նախագահ Իլհամ Ալիեւը նախորդ տարվա հոկտեմբերի 21-ին Ղազախստան կատարած պետական այցի ժամանակ հայտարարել էր, որ Ադրբեջանը հանել է դեպի Հայաստան բեռների տարանցման բոլոր սահմանափակումները, որոնք գոյություն ունեին օկուպացիայի ժամանակներից ի վեր:

ԱՄՆ ՍԵՆԱՏԸ ՄԵՐԺԵԼ Է

ԱՄՆ Սենատում Հանրապետական կուսակցության անդամները մերժել են բանաձեւը, որը կոչ էր անում Միացյալ Նահանգների վարչակազմին արգելել Իրանի դեմ ռազմական ուժի կիրառումն առանց օրենսդիր մարմնի թույլտվության: Ինչպես հաղորդում է Associated Press գործակալությունը, բանաձեւին կողմ է քվեարկել 47 պատգամավոր, դեմ՝ 53:

Հանրապետականների կողմից վերահսկվող վերին պալատում բանաձեւն ընդունելու համար անհրաժեշտ էր օրենսդիրների պարզ մեծամասնությունը:

Պատերազմական լիազորությունների մասին բանաձեւը օրենսդիրներին հնարավորություն էր տալիս պահանջել Կոնգրեսի կողմից հաստատում՝ նախքան որեւէ հետագա հարձակում իրականացնելը:

Քվեարկությունից առաջ Սենատի դեմոկրատական առաջնորդ Չակ Շումերը նշել էր. «Այսօր յուրաքանչյուր սենատոր կընտրի, թե որ կողմում է կանգնած: Արդյոք կանգնած եք Մերձավոր Արեւելքում հավերժական պատերազմներից հոգնած ամերիկացի ժողովրդի կողքին, թե՞ Դոնալդ Թրամփի եւ Փիթ Հեգսեթի կողքին, ովքեր մեզ գլխիվայր շպրտում են մեկ այլ պատերազմի մեջ»:

ԱՄՆ պաշտպանության նախարար Հեգսեթը նախօրեին հայտարարել էր, որ Իրանի դեմ սկսված պատերազմը կարող է շարունակվել ութ շաբաթ՝ ավելի երկար, քան կանխատեսել էր ԱՄՆ նախագահ Թրամփը:

ԽՈՍՈՒՆ ԹՎԵՐ

ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՇԽԱՏՈՒՄ Է ԳԵՐԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի 2025 թվականի գործունեության հաղորդումը, ներկայացված Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովին, փաստում է, որ համակարգը աշխատում է գերծանրաբեռնված ռեժիմով:

ArmLur.am-ը ուսումնասիրեց տարեկան հաղորդումը եւ արձանագրեց, որ հաշվետու տարում Հակակոռուպցիոն կոմիտեում միջինը փաստացի աշխատել է 59 քննիչ: Նույնիսկ վարչությունների պետերի տեղակալներն են ներգրավվել կոնկրետ վարույթների քննությանը՝ աճող գործերի հոսքին դիմակայելու համար:

Թվերը խոսուն են

2025 թվականին Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթներում քննվել է 2585 քրեական վարույթ (այդ թվում՝ կրկնակի հաշվառված): Սա նշանակում է, որ միջին հաշվով մեկ քննիչի բաժին է հասել շուրջ 44 վարույթ: Իսկ տարվա ընթացքում ձեւավորվել է 182 քննչական խումբ, ինչը եւս վկայում է գործերի բարդության եւ մեծ ծավալի մասին:

Այս ծանրաբեռնվածությամբ աշխատելու պայմաններում 2585 վարույթից ավարտվել է 890-ը, որոնցից ընդամենը 273-ն է մեղադրական եզրակացությամբ ուղարկվել դատարան, 617-ը՝ կարճվել:

Այսինքն՝ ավարտված վարույթների մոտ երկու երրորդը կարճվել է:

Ծանրաբեռնվածությո՞ւն, թե՞ համակարգային խնդիր

ArmLur.am-ը պարզեց, որ մեկ քննիչի վարույթում միջինը 44 գործ ունենալը փաստացի նշանակում է սահմանափակ ժամանակ եւ ռեսուրս յուրաքանչյուր քրեական գործի համար, հատկապես հաշվի առնելով, որ խոսքը կոռուպցիոն եւ բարդ ֆինանսական բնույթի հանցագործությունների մասին է:

2025 թվականի թվերը ցույց են տալիս մեկ բան՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ծանրաբեռնվածությունն արդեն դարձել է ոչ թե աշխատանքային, այլ համակարգային մարտահրավեր, որի մասին պետք է կառավարությունը մտածի: Քննիչներին ծանրաբեռնելով՝ արդյունավետությունը չի կարող ավելանալ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԱՋԱՏ Է ԱՐՁԱԿՎԵԼ

Հայտնի է, թե որ դատավորն է 300 միլիոն դրամ գրավի դիմաց ՊԵԿ նախկին նախագահ Վարդան Հարությունյանին կալանքից ազատել: Մեզ հայտնի դարձավ, որ Ռոբերտ Քոչարյանի գործը քննող դատավոր Սարգիս Պետրոսյանն է որոշում կայացրել՝ 300 միլիոն դրամ գրավի դիմաց նրան ազատ արձակել:

Հայտնել էինք, որ Գլխավոր դատախազությունը չի կարողանում ՊԵԿ նախկին նախագահ Վարդան Հարությունյանին կալանքի տանել: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Հակակոռուպցիոն վերաքննիչ դատարանը մերժել է Գլխավոր դատախազության բողոքը:

ՊԵԿ նախկին նախագահ, տնային կալանքի տակ գտնվող Վարդան Հարությունյանը 300 մլն դրամ գրավի դիմաց ազատ է արձակվել: Վերջինիս նկատմամբ խափանման միջոց է ընտրվել վարչական վերահսկողությունն ու բացակայելու արգելքը: Այս որոշումը դատախազությունը բողոքարկել էր, սակայն վերաքննիչը անփոփոխ է թողել որոշումը եւ, ըստ էության, մերժել է դատախազությանը:

Հիշեցնենք, որ Վարդան Հարությունյանը կալանավորվել էր 2025 թվականի օգոստոսի 8-ին՝ «Տաշիր» ընկերությունների խորհրդի նախագահ Սամվել Կարապետյանին ձերբակալելուց հետո, իսկ հոկտեմբերին կալանքը երկարաձգվել էր մեկ ամսով: Նոյեմբերի 7-ին հայտնի դարձավ, որ նա բանտից տեղափոխվել է տուն եւ գտնվում է տնային կալանքի տակ: Արդյունքում՝ տնային կալանքից եւս ազատվեց:

Վարդան Հարությունյանը մեղադրվում է ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու, հակամրցակցային գործունեության եւ փողերի լվացման մեջ, մինչդեռ մեղադրանքի հիմքում դրված հանգամանքներով քննություն արդեն իրականացվել է դեռեւս յոթ տարի առաջ եւ հերքվել: Մասնավորապես, քրեական գործը վերաբերում է «Նորֆոլկ Քոնսալթինգ» ընկերությանը, սակայն այս ընկերության հետ առնչության վերաբերյալ քրեական գործով 2018 թվականին քննություն է իրականացվել, եւ վարույթը կարճվել էր:

Վարդան Հարությունյանի պաշտպանական խումբը հայտարարել էր, որ կալանքի ակնհայտ անհամաչափ եւ ոչ իրավաչափ կիրառման վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանին հասցեագրված գանգատն արդեն մշակվել է եւ օրերս մուտքագրվելու է Եվրոպական դատարան:

Ք. Մ.

ՊԱՀԱՆՋ

Հակակոռուպցիոն դատարանը վարույթ է ընդունել Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը:

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին՝ 2011-2012 թվականներին կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալի, իսկ 2012 թվականից մինչեւ 2018 թվականն Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած Արտավազդ Սարգսյանից եւ նրան փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- 2 անշարժ գույք.
- 2 շարժական գույք.
- 1 իրավաբանական անձում մասնակցության իրավունք.
- 325 միլիոն 574 հազար դրամ՝ որպես ապօրինի դրամական միջոցների մնացորդ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

18 ԿԳ ՄԱՐԻԽՈՒԱՆԱ

Քրեական ոստիկանության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ 25-ամյա մի երիտասարդ Երեւան-Սեւան ավտոճանապարհին կից տարբեր տեղերում իրացման նպատակով տեղադրում է առանձնապես խոշոր չափերի թմրամիջոց: Տեղեկությունն իրացնելիս քրեական ոստիկանները համագործակցեցին Քննչական կոմիտեի մարդկանց թրաֆիքինգի եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչության ծառայողների հետ: Փետրվարի 23-ին՝ ժամը 15-ին, Քրեական ոստիկանները, համագործակցելով պարեկների հետ, Սեւան-Երեւան ճանապարհին, մեկ կիլոգրամ մարիխուանա տեղադրելու պահին, ձերբակալել են 25-ամյա երիտասարդին եւ իր վարած «Օպել» մակնիշի մեքենայով հանդերձ տեղափոխել Համայնքային ոստիկանության Արաբկիրի բաժին:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում խուզարկություններ են կատարվել տղամարդու վարած ավտոմեքենայում եւ բնակարանում: Հայտնաբերվել է մարիխուանայով լցված 17 փաթեթ, որոնց ընդհանուր քաշը մոտ 17 կիլոգրամ էր: Փետրվարի 26-ին երիտասարդը կալանավորվել եւ տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ԿԱՆԵՓԻ ԲՈՒՅՍԵՐ

Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության օպերատիվ-հետախուզական գործունեության բաժնում ստացվել էր օպերատիվ տեղեկություն, որ Զորաղբյուր գյուղի 59-ամյա բնակիչն աճեցնում է կանեփ, պատրաստում եւ իրացնում է թմրամիջոց: Տեղեկությունը ստուգելու համար Համայնքային ոստիկանության գլխավոր վարչությունը համագործակցել է Գառնիի բաժնի ծառայողների հետ, ձեռք բերել հիմնավոր ապացույցներ, որ տեղեկությունը ճիշտ է: Փետրվարի 24-ին Աբովյանի քննչական բաժնում նախաձեռնվեց քրեական վարույթ: Նույն օրը 59-ամյա տղամարդու տանը կատարվեց զննություն: Հայտնաբերվեցին ջերմատնային հատուկ կահավորված պայմաններում աճող կանեփի 33 բույս, 12 տուփ տոքսիկոքիմիական նյութեր, հատուկ ճառագայթման լույսեր, թմրամիջոցի պատրաստման համար նախատեսված պարագաներ եւ կանաչ զանգվածներ: 59-ամյա տղամարդը ձերբակալվեց եւ կազմված փաստաթղթերի հետ ներկայացվեց վարույթն իրականացնող մարմին:

Փետրվարի 26-ին նույն տանը կատարված խուզարկությամբ հայտնաբերվել է մարիխուանայի նմանվող զանգվածով լցված չորս տարա եւ նույն զանգվածով փայլաթիթեղի երկու փաթեթ:

Հայտնաբերվածն ուղարկվել է փորձաքննության: Ձեռնարկվում են միջոցառումներ թմրամիջոցի իրացման հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

● *Հանրապետությունում մարտի 3-ից 4-ը բացահայտվել է 131 հանցագործություն, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ՉՍՏՈՒԳՎԱԾ ՍՔՐԻՆՇՈԹԸ

2023թ. հուլիսի 31-ից Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում ընթանում է Սուրեն Մանուկյանի, Արմեն Քամալյանի, Թաթուլ Պողոսյանի, Մուրադ Մուրադյանի դատավարությունը: Ս. Մանուկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա Ա. Քամալյանի, Մ. Մուրադյանի, Թ. Պողոսյանի եւ մի խումբ այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ 2022թ. հուլիսի 27-ին՝ ժամը 7-ի սահմաններում, Իջեւան համայնքի Աչաջուր գյուղում առեւանգել են Գրիշա Քոքոբելյանին եւ վերջինիս տեղափոխել Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ծաթեր բնակավայր, մինչեւ 2022թ. օգոստոսի 2-ը պահել են նշված վայրում վարձակալած տանը եւ նույն օրը ազատ արձակել:

Ըստ մեղադրանքի՝ նշված ժամանակահատվածում՝ 2022թ. հուլիսի 29-ից Գրիշա Քոքոբելյանի որդուց՝ Խաչատուր Քոքոբելյանից, հորն ազատ արձակելու դիմաց շորթմամբ պահանջել են առանձնապես խոշոր չափերի գումար՝ 3 միլիոն ԱՄՆ դոլար, որից փաստացի ստացել են 40 հազար ԱՄՆ դոլար՝ կրիպտոարժույթի տեսքով:

Ս. Մանուկյանին, Ա. Քամալյանին, Թ. Պողոսյանին, Մ. Մուրադյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 191 հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով («Մի խումբ անձանց կողմից մարդուն առեւանգելը») եւ 258 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով («Շորթումը, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով»):

Ս. Մանուկյանը եւ մյուս մեղադրյալները իրենց առաջադրված մեղադրանքը չեն ընդունում՝ համարելով այն շինծու, հնարովի:

Սուրեն Մանուկյանը Իջեւանի նախկին փոխքաղաքապետն է, Իջեւանի անտառտնտեսության նախկին տնօրեն, ԱԺ նախկին պատգամավոր, ՀՅԴ Գերագույն մարմնի նախկին անդամ: Նա քրեական գործով շուրջ երեքուկես տարի գտնվել է կալանքի տակ, այժմ գտնվում է տնային կալանքի տակ, սահմանափակված է նրա շփումն իր ընտանիքի անդամ չհանդիսացող անձանց հետ:

Մարտի 4-ին Իջեւան քաղաքում կայացած նիստում Սուրեն Մանուկյանը հայտարարեց. «Չստուգված սքրինշոթի հիման վրա այսօր մենք գտնվում ենք անազատության մեջ: Եթե չստուգված սքրինշոթը բավարար է մարդուն ազատությունից զրկելու համար, ապա այդ դեպքում ապացույցների հետազոտումը դառնում է ձեւական: Հատկապես, որ մենք այս դատարանում միջնորդություն ենք ներկայացրել, որ Խաչատուր Քոքոբելյանի հեռախոսը ներկայացնեն դատարան, դատարանը մերժել է մեր միջնորդությունն այն դեպքում, որ մենք նոր ապացույցի վերաբերյալ չենք միջնորդություն ներկայացրել, այլ մեղադրանքի հիմքում դրված ապացույցի վերաբերյալ»:

Սույն քրեական գործով հաջորդ նիստը նշանակվեց մարտի 18-ին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՌԱՋՄԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆԱԴԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՉԻ ԲԱՑԱՌՈՒՄ

Կանադայի վարչապետ Մարկ Քարնին հայտարարել է, որ չի կարող լիովին բացառել Իրանի շուրջ սրվող պատերազմի մեջ Կանադայի հնարավոր ռազմական մասնակցությունը: Միաժամանակ նա նշել է, որ ԱՄՆ-Իսրայել հարվածները Իրանի դեմ կարող են հակասել միջազգային իրավունքին:

Հինգշաբթի օրը Կանբերրայում՝ Ավստրալիայի վարչապետի հետ համատեղ մամուլի ասուլիսի ընթացքում, Քարնիին հարց է ուղղվել՝արդյոք Կանադան կարող է ներգրավվել հակամարտության մեջ:

«Երբեք հնարավոր չէ ամբողջությամբ բացառել մասնակցությունը», - նշել է նա՝ընդգծելով, որ հարցը ներկայումս հիպոթետիկ է: Նա նաեւ հավելել է, որ Կանադան «կկանգնի իր դաշնակիցների կողքին» եւ «միշտ կպաշտպանի կանադացիներին»:

Կանադայի վարչապետը ավելի վաղ հայտարարել էր, որ Իրանի դեմ հարվածներին աջակցում է «որոշակի ափսոսանքով», քանի որ դրանք, նրա խոսքով, ցույց են տալիս միջազգային կարգի խաթարման ծայրահեղ օրինակ:

Քարնիի խոսքով՝ Կանադային նախապես չեն տեղեկացրել ԱՄՆ-Իսրայել հարձակման մասին, որը սկսվել է շաբաթ օրը: «Մեզ նախապես չեն տեղեկացրել եւ մեզ չեն առաջարկել մասնակցել», - ասել է նա լրագրողներին:

Վարչապետը նշել է, որ նախնական գնահատմամբ այդ գործողությունները կարող են «անհամապատասխան լինել միջազգային իրավունքին», քանի որ, ըստ նրա, ԱՄՆ-ը եւ Իսրայելը գործել են առանց ՄԱԿ-ի ներգրավման կամ դաշնակիցների հետ խորհրդակցելու, այդ թվում՝ Կանադայի:

Նա նաեւ դատապարտել է Իրանում խաղաղ բնակիչների դեմ հարվածները եւ կոչ արել հակամարտության բոլոր կողմերին հարգել միջազգային իրավունքի կանոնները: Միեւնույն ժամանակ Քարնին նշել է, որ վերջնական իրավական գնահատականը պետք է տան համապատասխան միջազգային կառույցները:

Տարածաշրջանից կանադացիների տարհանում

Կանադայի արտաքին գործերի նախարար Անիտա Անանդը հայտարարել է, որ կառավարությունը փորձում է աջակցել ավելի քան 2000 կանադացիների, որոնք դիմել են օգնության՝ Մերձավոր Արեւելքից հեռանալու համար հակամարտության սկսվելուց հետո:

Նրա խոսքով՝ օգնության հարցումների մոտ կեսը ստացվել է ԱՄԷ-ում գտնվող կանադացիներից: Մյուս դիմումները եղել են Քաթարից (ավելի քան 230), Լիբանանից (առնվազն 160), Իսրայելից (ավելի քան 90) եւ Իրանից (74):

Կանադայի արտաքին գործերի նախարարությանը հանձնարարվել է առաջիկա օրերին կազմակերպել չարտերային չվերթներ Արաբական Միացյալ Էմիրություններից՝ պայմանով, որ երկրի իշխանությունները թույլատրեն օգտագործել իրենց օդային տարածքը:

Մինչ այդ տարածաշրջանի մեծ մասում առեւտրային ավիաչվերթները գրեթե դադարեցվել են հակամարտության պատճառով: Խոշոր ավիացիոն հանգույցները, այդ թվում՝ Դուբայի միջազգային օդանավակայանը, որը աշխարհի ամենածանրաբեռնվածներից է միջազգային ուղեւորների համար, հիմնականում փակ են:

Սա համարվում է ավիափոխադրումների ամենախոշոր խափանումներից մեկը՝ սկսած COVID-19 համավարակից ի վեր:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԸ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ ԵՆ

Ապրիլի 1-ից Հայաստանում կենսաթոշակները կբարձրանան: Որոշումն ընդունվեց երեկ կառավարության նիստում: Բարձրացված գումարի չափը մեկանգամյա հավելյալ վճար չէ: Այսինքն՝ ապրիլի 1-ից բարձրացված թոշակը կպահպանվի նաեւ հաջորդող ամիսներին: Ներկայացնում ենք հաշվարկված տվյալները, որոնք ցույց են տալիս, թե տարբեր շահառու խմբերի համար որքանով կավելանա կենսաթոշակի չափը:

Հիշեցնենք, որ կենսաթոշակների եւ նպաստների նշված չափերին անկանխիկ առեւտրից գումարվում է նաեւ 20%՝ մինչեւ 10 000 դրամ հետվճար: Կենսաթոշակի քարտերից գումար կանխիկացնել հնարավոր է, սակայն հետվճար ստանալու համար անհրաժեշտ է առեւտուրը կատարել անկանխիկ:

7 փաստ 2026 թվականի ապրիլի 1-ից կենսաթոշակների բարձրացման նախագծի մասին:

Փաստ 1

Նվազագույն կենսաթոշակի չափը կդառնա 46000 դրամ (36000 դրամի փոխարեն):

Փաստ 2

Աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը կդառնա 34000 դրամ (24000 դրամի փոխարեն):

Փաստ 3

Կբարձրացվեն ծերության, կերակրողին կորցնելու դեպքում եւ հաշմանդամության նպաստների չափերը.

ա. ծերության նպաստի չափը կդառնա 46000 դրամ (36000 դրամի փոխարեն),

բ. «հաշմանդամ երեխա ճանաչված անձ» կարգավիճակ ունեցող անձի նպաստը կդառնա 49000 դրամ (39000 դրամի փոխարեն),

գ. ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով (1-ին խմբի հաշմանդամության) նպաստը կդառնա 49000 դրամ (39000 դրամի փոխարեն),

ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով (2-րդ խմբի հաշմանդամության) նպաստը կդառնա 47500 դրամ (37500 դրամի փոխարեն),

ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով (3-րդ խմբի հաշմանդամության) նպաստը կդառնա 46000 դրամ (36000 դրամի փոխարեն):

Փաստ 4

Միջին կենսաթոշակը ապրիլի 1-ից կդառնա 66 հազար դրամ (59000 դրամ միջին կենսաթոշակ + միջին հետվճար՝ 7000 դրամ):

Սա գերազանցում է նվազագույն սպառողական զամբյուղը 4000 դրամով:

Փաստ 5

Կբարձրացվեն պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափերը՝

ա. ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով (1-ին խմբի հաշմանդամության) կենսաթոշակը կդառնա 64600 դրամ (50600 դրամի փոխարեն),

բ. ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով (2-րդ խմբի հաշմանդամության) կենսաթոշակը կդառնա 54800 դրամ (41400 դրամի փոխարեն),

գ. ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով (3-րդ խմբի հաշմանդամության) կենսաթոշակը կդառնա 48000 դրամ (38000 դրամի փոխարեն):

Փաստ 6

Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի մահացած (զոհված) զինծառայողի ընտանիքի անդամի կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակը կդառնա 48000 դրամ (38000 դրամի փոխարեն):

Փաստ 7

Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի մահացած (զոհված) զինծառայողի ընտանիքի անդամի երկու ծնողին կորցրած՝ 18 տարին չլրացած երեխայի դեպքում կենսաթոշակը կդառնա 170000 դրամ (120000 դրամի փոխարեն):

Հիշեցնենք, որ կենսաթոշակների եւ նպաստների նշված չափերին անկանխիկ առեւտրից գումարվում է նաեւ 20%՝ մինչեւ 10000 դրամ հետվճար:

● *Ըստ ՃՏՊ վիճակագրության՝ անցած օրում գրանցվել է 11 ավտովթար, 11 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱՇԽԱՐՀ

ՊԱՏՐԱՍՏ Է

Ռուսաստանը պատրաստ է Ուկրաինայի շուրջ հետագա բանակցությունների: Ինչպես տեղեկանում ենք «Ինտերֆաքս» գործակալությունից, այդ մասին հայտարարել է ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը: «Մենք պատրաստ ենք բանակցությունների, - ասել է Լավրովը եւ հավելել,-բայց կրկնում եմ՝ մենք տեսնում ենք, թե ինչպես են բանակցությունները շատ հաճախ քող դառնում ոչ այնքան բարեկամական գործողությունների համար»: Մասնավորապես, ըստ Լավրովի՝ԱՄՆ-ը ներկայում շարունակում է հետախուզական տեղեկատվություն փոխանցել Ուկրաինային, զենք վաճառել եվրոպական երկրներին, որոնք, իրենց հերթին, դրանք փոխանցում են Ուկրաինային, ինչպես նաեւ ուժեղացնում են Ռուսաստանի վրա պատժամիջոցների ճնշումը:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Պակիստանը չի ցանկանում ներքաշվել Իրանի դեմ Իսրայելի եւ ԱՄՆ-ի սկսած հակամարտության մեջ: Այս մասին ասվում է Պակիստանի կառավարության հայտարարության մեջ, որը հրապարակվել է վարչապետ Շահբազ Շարիֆի նստավայրում քաղաքական կուսակցությունների եւ խորհրդարանական խմբակցությունների ղեկավարների հետ փակ ճեպազրույցից հետո: Շարիֆը հանդիպմանն ասել է, որ Պակիստանը զգուշավոր դիրքորոշում կպահպանի Մերձավոր Արեւելքում աճող հակամարտության հարցում եւ դիվանագիտական ջանքեր կգործադրի լարվածությունը թուլացնելու համար: Ընդգծվել է, որ Պակիստանի կառավարությունը խորհրդակցություններ է վարում Մերձավոր Արեւելքի երկրների իշխանությունների հետ տարածաշրջանում իրադրության կարգավորման ուղիների շուրջ: Ավելի վաղ փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Իսհաք Դարը հայտարարել էր Պակիստանի պատրաստակամության մասին՝ աջակցելու ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ բանակցություններին, որոնց ացկացումը հնարավոր է Իսլամաբադում:

ՎԻՐԱՎՈՐՆԵՐ

Աբու Դաբիի իշխանությունները հայտնել են, որ հակաօդային պաշտպանության համակարգերի կողմից անօդաչու թռչող սարքերի հաջող որսալուց հետո երկու վայրում բեկորներ են ընկնել, որի հետեւանքով 6 մարդ է վիրավորվել: A-ի փոխանցմամբ՝այս մասին հաղորդում է Աբու Դաբիի լրատվական գրասենյակը. «Միջադեպի հետեւանքով Պակիստանի եւ Նեպալի վեց քաղաքացի ստացել է թեթեւ եւ միջին ծանրության վնասվածքներ»: Գրասենյակը հայտնել է, որ միջադեպը տեղի է ունեցել մայրաքաղաքի ICAD II արդյունաբերական գոտում: Այն գտնվում է Ալ-Դաֆրա ավիաբազայի մոտ, որտեղ տեղակայված են ամերիկյան ուժերը:

Փետրվարի 28-ին ԱՄՆ-ը եւ Իսրայելը «կանխարգելիչ» ռազմական գործողություն են սկսել Իրանի դեմ: Սպիտակ տունը հարձակումը հիմնավորել է Թեհրանից բխող հրթիռային եւ միջուկային սպառնալիքներով: Իրանը պաշտոնապես հայտարարել է, որ հարձակումներ է իրականացնելու Մերձավոր Արեւելքում ամերիկյան ռազմաբազաների վրա՝ ի պատասխան ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից սկսված ռազմական գործողությունների:

ԼՈՆԴՈՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ

ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ՝ LFG ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄ

Ամերիաբանկը՝ որպես Lion Finance Group (LFG) միջազգային ֆինանսական խմբի մաս, ներառվել է աշխարհի առաջատար բորսաներից մեկի՝ Լոնդոնի ֆոնդային բորսայի (London Stock Exchange) FTSE 100 ինդեքսում: Այսպիսով, որպես LFG խմբի անդամ՝ Ամերիաբանկն առաջին հայկական հաստատությունն է, որն ընդգրկվում է Լոնդոնի ֆոնդային բորսայի 100 խոշորագույն ընկերությունների շարքում՝ խմբի տուկայական կապիտալիզացիայի մեծության շնորհիվ:

2006թ-ից Լոնդոնի ֆոնդային բորսայում ցուցակված լինելով՝ LFG ֆինանսական խումբն ընդգրկվում է FTSE 100 ինդեքսում Ամերիաբանկի՝ խմբին միանալուց շուրջ երկու տարի անց: Սա վկայում է Ամերիաբանկի՝խմբում ընդգրկվելու ռազմավարական նշանակության եւ խմբի ընդհանուր զարգացման մեջ ունեցած էական ներդրման մասին:

LFG խումբն ինդեքսին պաշտոնապես կմիանա 2026թ. մարտի 20-ին՝ շուկաների փակումից հետո: Փոփոխությունն ուժի մեջ կմտնի 2026թ. մարտի 23-ին: FTSE 100 ինդեքսում ընդգրկված են այնպիսի առաջատար միջազգային ընկերություններ ֆինանսական եւ այլ ոլորտներից, ինչպիսիք են HSBC-ն (HSBA), Barclays-ը (BARC), Lloyds Banking Group-ը (LLOY), Rolls-Royce Holdings-ը (RR), Unilever-ը (ULVR), Coca-Cola-ն (CCH, CCEP), AstraZeneca-ն (AZN) եւ այլն: Իր շուկայական արժեքով LFG-ն առաջ է անցել այնպիսի ընկերություններից, ինչպիսիք են Burberry-ն (BRBY) եւ EasyJet-ը (EZJ):

Ամերիաբանկի գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանն ընդգծում է իրադարձության կարեւորությունը ոչ միայն բանկի եւ խմբի, այլեւ տարածաշրջանի եւ Հայաստանի համար:

«Սա կարեւոր ազդակ է միջազգային ներդրողների վստահության տեսանկյունից: Լոնդոնի ֆոնդային բորսայի այս ինդեքսում ներառվելը նշանակում է, որ միջազգային ներդրումային մասնագիտական համայնքը բարձր է գնահատել մեր զարգացման ռազմավարությունը եւ դրա իրականացման շնորհիվ գրանցված արդյունքները: Ընդհանուր առմամբ, FTSE 100-ում ընդգրկվելը նպաստում է Հայաստանի տեսանելիության ու հեղինակության բարձրացմանը: Այս կարեւոր ձեռքբերման առիթով ցանկանում եմ հատուկ շնորհակալություն հայտնել մեր թիմին մեծ նվիրումի ու պրոֆեսիոնալիզմի, ինչպես նաեւ հաճախորդներին ու գործընկերներին՝ վստահության եւ համագործակցության համար»,- ասել է նա:

«FTSE 100 ինդեքսում ընդգրկվելը թիմերի հետեւողական աշխատանքի արդյունքում ստեղծված արժեքի պաշտոնական ճանաչումն է: Այս նվաճումն ընդգծում է Lion Finance Group-ի ռազմավարության հզորությունը, ինչպես նաեւ նրա նորարարական, տեխնոլոգիաների վրա հիմնված եւ հաճախորդակենտրոն մոտեցումը թե՛ հայկական, թե՛ վրացական շուկաներում: Ես կարծում եմ, որ այս ձեռքբերումը կամրապնդի միջազգային ներդրողների հետաքրքրությունը խմբի նկատմամբ եւ կնպաստի նոր ներդրումների ներգրավմանը: Շնորհակալություն եմ հայտնում մեր թիմի բոլոր անդամներին, որոնց պրոֆեսիոնալիզմը եւ համատեղ ջանքերը հնարավոր դարձրին մեր ընդգրկումը FTSE 100 ինդեքսում», - նշել է Lion Finance Group-ի գործադիր տնօրեն Արչիլ Գաչեչիլաձեն:

Ամերիաբանկի մասին

Ամերիաբանկը ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը: Թվային փոխակերպման ռազմավարության ներքո բանկը ներդնում եւ շարունակաբար կատարելագործում է շուկայում եզակի պրոդուկտներ, ծառայություններ եւ նորարարական հարթակներ, որոնք միտված են բավարարելու մարդկանց ֆինանսական եւ ոչ ֆինանսական կարիքները: Ամերիաբանկը, որպես դինամիկ զարգացող ֆինթեք միջավայր, առաջարկում է կյանքի որակը բարելավող ամբողջական լուծումներ:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ԱՐՄԼԻԶԻՆԳԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ՝ ԲՈՐՍԱՅՈՒՄ

Ներդրողներն այսուհետ հնարավորություն ունեն մասնակցելու դրանց բորսայական առեւտրին, այդ թվում՝ պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացրած Կոնվերս Բանկի միջոցով:

Բանկը մեկ օրում՝ փետրվարի 4-ին, տեղաբաշխել էր Արմլիզինգի՝ 1 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով պարտատոմս Հայաստանի ֆոնդային բորսայի հարթակում:

Արդյունքում, ընկերությունը դարձել է ՀՀ լիզինգի ոլորտի՝ պարտատոմսեր տեղաբաշխած եւ ցուցակած առաջին ընկերությունը;

Հաջողելու համար պետք է ճանապարհին անցնել վստահելի գործընկերոջ հետ

Կոնվերս բանկի գլխավոր գործադիր տնօրեն Անդրանիկ Գրիգորյանն ասում է. «Արմլիզինգի պարտատոմսերի տեղաբաշխումն ավարտվել է կարճ ժամկետում՝ 1 օրում, ինչը վկայում է թողարկողի ու տեղաբաշխողի նկատմամբ ներդրողների վստահության մասին:

Յուրաքանչյուր հաջողված թողարկման, տեղաբաշխման հիմքում պրոֆեսիոնալ կազմակերպված գործընթաց է՝իրատեսական ծավալներ, հավասարակշռված պայմաններ եւ վստահություն: Այդ ճանապարհին կարեւոր է ունենալ գործընկեր, որը ոչ միայն կազմակերպում է տեղաբաշխումը, այլեւ դառնում է վստահելի գործընկեր պլանավորումից մինչեւ շուկայի ստեղծում: Այդ փորձն ու համակարգված մոտեցումը տարիներ շարունակ ապահովում է Կոնվերս Բանկը՝ բիզնեսին տալով վստահ եւ արդյունավետ աճի հնարավորություն: Այսուհետ եւս Բանկն անելու է հնարավորինը Հայաստանում խորը իրացվելիությամբ կապիտալի շուկայի ձեւավորման ուղղությամբ»:

Պարտատոմսերի ցուցակմամբ սկսվում է Արմլիզինգի զարգացման նոր փուլը

Արմլիզինգի գլխավոր գործադիր տնօրեն Արսեն Բազիկյանն ասում է. «Ֆոնդային բորսայում պարտատոմսերի շրջանառության մեկնարկը խորհրդանշում է ընկերության մուտքը կապիտալի շուկա՝ նշանավորելով զարգացման նոր փուլ: Կապիտալի շուկայի միջոցով ֆինանսական միջոցների ներգրավումը հնարավորություն է տալիս ձեւավորել ֆինանսավորման աղբյուրների արդյունավետ եւ կայուն կառուցվածք, ապահովել երկարաժամկետ աճ, ինչպես նաեւ ամրապնդել բաց եւ հաշվետու կառավարման սկզբունքներ: Վստահ ենք, որ պարտատոմսերի թողարկումը կնպաստի ներդրողների հետ վստահելի եւ երկարատեւ համագործակցության ձեւավորմանը՝ ընդլայնելով մեր կարողությունները Հայաստանի տնտեսության առանցքային ոլորտների ֆինանսավորման ուղղությամբ»:

Սա եւս մեկ քայլ է երկրի ներդրումային գրավչության բարձրացման ուղղությամբ

Հայաստանի ֆոնդային բորսայի գլխավոր տնօրեն Հայկ Եգանյանը նշել է. «Լիզինգային ֆինանսավորում տրամադրող ընկերության մուտքը կապիտալի շուկա ողջունելի քայլ է շուկայի ներդրումային գրավչության բարձրացման տեսանկյունից: Այս նախաձեռնությամբ ընկերությունը ոչ միայն հնարավորություն է ստանում ներգրավել այլընտրանքային ֆինանսական միջոցներ իր ռազմավարական ծրագրերի իրականացման համար, այլեւ ձեռք բերել վստահություն համագործակցության ընդլայնման նպատակով՝ միաժամանակ ամրապնդելով իր դիրքերը թե՛ տեղական, թե՛ միջազգային ներդրողների շրջանում՝ որպես վստահելի ու հաշվետու գործընկեր»:

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՄԵՂԱԴՐՈՒՄ ԵՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԹՐԻՇԱ ԹԱԹԼԻՆ

«Խոսքի ազատության աջակցությունն ավելի կարեւոր է, քան երբեւէ»: Խոշոր կինոփառատոնների ղեկավարները աջակցություն են հայտնել Բեռլինալեի ռեժիսոր Թրիշա Թաթլին, ով պատշտոնանկության է ենթարկվում ռեժիսորների կողմից պաղեստինամետ հայտարարությունների պատճառով:

Աշխարհի խոշորագույն կինոփառատոնների ղեկավարները, այդ թվում՝ Կաննի ֆորումի ղեկավար Թիերի Ֆրեմոն, Սանդենսի ռեժիսոր Յուջին Հերնանդեսը, Լոնդոնի կինոփառատոնի ղեկավար Քրիստի Մաթիսոնը եւ Տորոնտոյի փառատոնի տնօրեն Քեմերոն Բեյլին հայտարարություն են տարածել Բեռլինալեի տնօրեն Թրիշա Թաթլին աջակցելու մասին՝ նրա հնարավոր պաշտոնանկության մասին լուրերի ֆոնին:

Թաթլը, որը իր հնգամյա պայմանագրի երկու տարին անցկացրեց, Բեռլինալեի ներկայիս մրցանակաբաշխության ժամանակ իր պաղեստինամետ արտահայտություններից հետո քաղաքական վրդովմունքի ալիքի բախվեց:

«Մենք աջակցում ենք Թրիշա Թաթլի՝ Բեռլինալեի կինոփառատոնի տնօրենի պաշտոնը շարունակելու ցանկությանը՝ մեր լիակատար վստահությունը հայտնելով նրան եւ պահպանելով նրա ինստիտուցիոնալ անկախությունը», - ասվում է աշխարհի ամենահեղինակավոր կինոփառատոնների 32 ղեկավարների կողմից ստորագրված նամակում:

Ստորագրողների թվում են նաեւ՝ Ջեոն Հան-սոկը (Բուսանի կինոփառատոն), Իլդա Սանտյագոն (Ռիոյի փառատոն), Վանյա Կալուդերջիչը (Ռոտերդամի միջազգային կինոփառատոն), Կարել Օհը (Կարլովի Վարիի միջազգային կինոփառատոն), Ջոնա Ա. Նազարոն (Լոկարնոյի կինոփառատոն), Լուսիա Օլասիրեգին (Սան Սեբաստիանի միջազգային կինոփառատոն), Ֆրենսիս Ուոլեսը (Սիդնեյի կինոփառատոն) եւ Ջուլի Հանթսինգերը (Թելուրիդի կինոփառատոն):

Բեռլինի կինոփառատոնը սկզբում մեղադրվեց քաղաքական խոսքը գրաքննելու մեջ, երբ հայտնի մասնակիցները, այդ թվում՝ ժյուրիի նախագահ Վիմ Վենդերսը, հրաժարվեցին քննարկել քաղաքականությունը:

Վեճը բռնկվեց փակման գիշերը, երբ որոշ դափնեկիրներ իրենց ընդունման ելույթներն օգտագործեցին Պաղեստինին եւ Գազայի հատվածին աջակցություն հայտնելու համար:

Գերմանիայի շրջակա միջավայրի նախարար Կարստեն Շնայդերը լքեց արարողությունը պաղեստինցի ռեժիսոր Աբդալլահ ալ-Խատիբի ելույթից հետո, որի «Պաշարման ժամանակագրություններ» ֆիլմը արժանացավ «Հեռանկարներ» բաժնում գլխավոր մրցանակին: Իր ելույթում նա մեղադրեց Գերմանիայի կառավարությանը «Իսրայելի կողմից Ղազայում իրականացված ցեղասպանության գործընկեր լինելու» մեջ՝ մասնավորապես անդրադառնալով Բեռլինի իսրայելամետ դիրքորոշմանը, որը արմատավորված էր ցավոտ պատմական ժառանգության մեջ:

Գերմանական պահպանողական «Bild» թերթը, որը բացահայտորեն աջակցում է Իսրայելին, հայտարարեց, որ Թաթլի հրաժարականը անխուսափելի է: Աջակողմյան լրագրող Գունար Շուպելիուսի սյունակում նրան մեղադրեցին «Ղազայի օգտին քարոզչության համար նկարահանումներ կատարելու» մեջ՝ մեջբերելով Թաթլի լուսանկարը Ալ-Խատիբի եւ «Պաշարման ժամանակագրություններ» խմբի հետ Բեռլինալեում ֆիլմի համաշխարհային պրեմիերայի ժամանակ: Հեղինակը պնդում էր, որ Թաթլը թույլ է տվել, որ փառատոնը դառնա «հակասեմական» ակտիվիստների գործիք:

Այս մեղադրանքներին հակադարձեց Թաթլի աջակցության ալիքը՝ ոչ միայն Բեռլինալեի ներսում, այլեւ ավելի քան 3000 կինոգործիչների կողմից, որոնք ստորագրեցին բաց նամակ, որում հայտարարում էին, որ փառատոնի ուժը «կայանում է բազմազան տեսակետներ ընդունելու եւ բազմաթիվ ձայներին տեսանելիություն տալու իր ունակության մեջ»:

Գերմանական լրատվամիջոցներին տված հարցազրույցում Թաթլը խոստովանեց, որ անցյալ շաբաթ փառատոնի վերահսկիչ խորհրդի նիստում նա եւ Գերմանիայի մշակույթի նախարար Վոլֆրամ Վայմերը «քննարկել են փոխադարձ բաժանման հնարավորությունը», բայց ընդգծել է աշխատանքը շարունակելու իր մտադրությունը:

«Ես շատ հպարտ եմ իմ թիմով եւ փառատոնով, եւ ես ցանկանում եմ շարունակել մեր սկսած աշխատանքը լիակատար վստահությամբ եւ ինստիտուցիոնալ անկախությամբ», - գերմանական dpa լրատվական գործակալությանը ասել է Թաթլը:

ԳՈՌՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

«ԱՐԴԵՆ ՀՈԳՆԵԼ ԵՄ»

«Կրասնոդարի» եւ Հայաստանի ազգային հավաքականի ավագ, կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանը խիստ քննադատության է ենթարկել մրցավարական անձնակազմի աշխատանքը Ռուսաստանի գավաթի խաղարկության կիսաեզրափակիչի առաջին խաղում՝ Մոսկվայի ԲԿՄԱ-ի դեմ կայացած հանդիպումից հետո:

Հիշեցնենք, որ թիմերի միջեւ դիմակայությունը կայացել է մարտի 4-ին եւ ավարտվել «բանակայինների» հաղթանակով՝ 3-1 հաշվով:

«Գոնսալեսի հեռացումը պարզապես սարսափելի էր: Նման բան չպետք է լինի: Չեմ հասկանում՝ ինչպես է դա տեղի ունենում: Ես արդեն հոգնել եմ նման մրցավարությունից»,- հայ ֆուտբոլիստի խոսքերն է մեջբերում «Матч ТВ»-ն:

Հավելենք, որ Ռուսաստանի գավաթի ընթացիկ խաղարկությունում Սպերցյանը դաշտ է դուրս եկել 7 հանդիպման եւ դարձել 1 գոլի հեղինակ: Ինչ վերաբերում է Ռուսաստանի առաջնությանը, ապա հարձակվողական ոճի կիսապաշտպանն անցկացրած 19 խաղում դարձել է 9 գոլի եւ 13 գոլային փոխանցման հեղինակ:

Ֆուտբոլիստի գործող պայմանագրի ժամկետը «ցուլերի» հետ նախատեսված է մինչեւ 2029 թվականը:

ԴԱՏԱՊԱՐՏՎԵՑ

«Մանչեսթեր Յունայթեդի» պաշտպան Հարի Մագուայերը մեղավոր է ճանաչվել 2020 թվականին Հունաստանում տեղի ունեցած միջադեպի գործով եւ դատապարտվել 15 ամսվա պայմանական ազատազրկման:

Ինչպես հայտնում են Daily Mail պարբերականը եւ լրագրող Բեն Ջեյքոբսը, անգլիացի ֆուտբոլիստը մեղավոր է ճանաչվել ոչ լուրջ մարմնական վնասվածքներ հասցնելու մեջ:

Հիշեցնենք, որ աղմկահարույց միջադեպը տեղի էր ունեցել 2020 թվականի օգոստոսին՝ Հունաստանի Միկոնոս կղզում, որտեղ Մագուայերն ընտանեկան հանգիստն էր անցկացնում: Տեղի բարերից մեկում ֆուտբոլիստն ու նրա ընկերները վիճաբանության եւ ծեծկռտուքի մեջ էին մտել այլ անգլիացիների հետ: Դեպքի վայր ժամանած ոստիկանների ուղղությամբ Մագուայերի խումբը նույնպես հարձակում էր գործել, ինչի հետեւանքով պաշտպանն ու նրա երկու ընկերները ձերբակալվել եւ տեղափոխվել էին ոստիկանական բաժանմունք:

Սկզբնական դատավճռով Մագուայերը դատապարտվել էր 21 ամսվա պայմանական ազատազրկման. նրան մեղադրանք էր առաջադրվել հարձակման, ձերբակալությանը դիմադրելու եւ կաշառք տալու փորձի համար: Սակայն ֆուտբոլիստի փաստաբանները բողոքարկել էին այդ որոշումը, ինչի արդյունքում դատարանը վերանայել է գործը եւ մեղմացրել պատիժը՝ սահմանելով 15 ամիս պայմանական ժամկետ:

Ակնկալվում է, որ Մագուայերն այս վճռի դեմ նույնպես բողոքարկում կներկայացնի՝ գործը հասցնելով արդեն Գերագույն դատարան, ուստի դատական քաշքշուկները դեռ կշարունակվեն:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության թանգարան-ինստիտուտի ցուցասրահում բացվեց վաստակավոր ճարտարապետ Մարտին Միքայելյանի 100-ամյակին նվիրված ցուցահանդես «Ես 100 տարեկան եմ եւ այսօր էլ հաշվետու եմ» խորագրով:

Ցուցահանդեսի համակարգող, ճարտարապետ Կարեն Բալյանի խոսքով, ով, ի դեպ, Մարտին Միքայելյանի սանն է, պատահական չեն ընտրել խորագիրը: «Երբ մենք հավաքվեցինք Մարտին Միքայելյանի ավագ որդու՝ ճարտարապետ Ավետ Միքայելյանի տանը եւ մտածում էինք, թե ինչպես պետք է կազմակերպենք ցուցադրությունը, հասկացանք, որ հիմնական նյութը, որ պահպանվել է, վարպետի արած լուսանկարներն են: Այո, այդքան շռայլ ժառանգություն թողած ճարտարապետներից քչերն են անձնական արխիվներ հավաքել, ավաղ: Եւ որոշվեց, որ վարպետն ինքը իր լուսանկարներով հաշվետու կլինի: Հաշվետու կլինի որպես վաստակաշատ ճարտարապետ, մանկավարժ, բազմաթիվ հոդվածների հեղինակ, որոնցում ամփոփել է իր ճարտարապետական հայացքները: Նաեւ իր վրձնած գեղանկարներով եւ պոետիկ բանաստեղծություններով»,- ասաց պարոն Բալյանն ու հավելեց, որ շատ հուզիչ է, երբ ուսուցչիդ կարող ես տարիներ անց ինչ-որ չափով վերադարձնել քո շնորհակալական վերաբերմունքը:

Մարտին Միքայելյանի առաջին նախագիծը հայրական ընտանիքի առանձնատունն էր Ալիխանյանի փողոցում, որն արվեց որպես կուրսային աշխատանք: «Հայրս այն հազվագյուտ ճարտարապետներից էր, ում համարյա բոլոր նախագծերով շենքեր են կառուցվել»,-նշում է Մարտին Միքայելյանի կրտսեր որդին՝ Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանը:

Մարտին Միքայելյանի կառույցների աշխարհագրությունը եւս յուրատեսակ ցուցանիշ է: Հարյուրից ավելի կառույց, որոնք գտնվում են Հայաստանի երեսուն բնակավայրերում՝ առողջարաններ, մասնավորապես Հանքավանում, Ջերմուկում, մշակույթի տներ, բնակելի շենքեր: Նախագծել է նաեւ Մեծամոր եւ Հրազդան քաղաքների գլխավոր հատակագծերը:

● *Այսօր՝ ժամը 19:00-ին, Հ.Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա Շեքսպիրի «Համլետ» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ ինչպես կարելի է ձեռքբերել կառուցվող բազմաբնակարան (ստորաբաժանված) շենքում բնակարան կամ ոչ բնակելի տարածք:

Տիգրանուհի Հարությունյան
(30 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերում բնակարան կամ ոչ բնակելի տարածք ձեռքբերելիս սեփականության իրավունքով ձեռք է բերվում հողամասի համապատասխան բաժնային մասը: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդված):

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը անձի՝ ուրիշի սեփականություն հանդիսացող բնակելի տարածությունում բնակվելու իրավունքն է: Հողամասի մասը կարող է օտարվել առանց նախօրոք առանձնացվելու: Դրա համար օտարման պայմանագրին, որպես դրա անբաժանելի մաս, պետք է կցված լինի հողամասի օտարող մասի հատակագիծը:

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ հետագա արտահանման պարտավորությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չարտահանելու դեպքում որքան տուգանք է սահմանված:

Հրաչ Դուրյան
(42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հ. Դուրյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի համաձայն՝ հետագա արտահանման պարտավորությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքները եւ տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չարտահանելը կամ հետագա ներմուծման պարտավորությամբ արտահանված ապրանքները եւ տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետություն չներմուծելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ խախտման օրվա դրությամբ այդ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծության 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 50 հազար դրամ: Նույն խախտումը, որը զուգորդվել է ապրանքների կամ տրանսպորտային միջոցների օտարմամբ, առաջացնում է տուգանքի նշանակում՝ օտարված ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով:

Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ սահմանված ժամկետում մաքսային մարմիններին ապրանքների եւ տրանսպորտային միջոցների վերաբերյալ մաքսային հայտարարագիր չներկայացնելը, ինչպես նաեւ մաքսային հսկողություն իրականացնելու համար ապրանքների եւ տրանսպորտային միջոցների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելը, անկախ գրավոր հայտարարագիր ներկայացնելուց, առաջացնում է տուգանքի նշանակում 50,000 դրամի չափով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Աբովյան փողոցում

Թող աշխարհում լինի խաղաղություն, եւ բոլորն ապրեն սիրով ու համերաշխությամբ: Խաղաղությունը ամենամեծ արժեքն է, որը պետք է պահպանենք:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 10 - 15 - 2 + 2
	Կոտայքի լեռներ	- 9 - 13 - 1 + 3
	Կոտայքի նախալեռներ	- 4 - 7 + 6 + 9
	Գեղարքունիք	- 10 - 15 -1 + 4
	Լոռի	- 8 - 13 + 6 + 10
	Տավուշ	- 5 - 9 + 8 + 11
	Արագածոտնի լեռներ	- 11 - 15 - 2 + 2
	Արագածոտնի նախալեռներ	- 2 - 7 + 5 + 10

	Արարատ	- 2 - 5 + 8 + 11
	Արմավիր	- 1 - 5 + 8 + 12
	Վայոց ձորի լեռներ	- 9 - 14 0 + 4
	Վայոց ձորի նախալեռներ	0 - 4 + 8 + 12
	Սյունիքի լեռներ	- 10 - 14 - 2 + 2
	Սյունիքի նախալեռներ	- 5 - 10 + 8 + 12
	Սյունիքի հովիտներ	- 2 + 2 + 12 + 16
	Երեւան	- 3 - 5 + 9 + 11

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **05.03.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*